



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

---

**2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 հուլիսի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Մուրադյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի հոկտեմբերի 14-ին ստորագրված «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի հունիսի 16-ի N 966-Ա որոշմամբ հավանություն է տվել 2014 թվականի հոկտեմբերի 14-ին ստորագրված «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի հունիսի 20-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2014 թվականի հոկտեմբերի 14-ին՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) և Մեծ քսանյակի (G20) պետությունների կողմից համատեղ մշակված Հարկային հարցերում ֆինանսական տեղեկությունների ավտոմատ փոխանակման ստանդարտին (Standard for Automatic Exchange of Financial Information in Tax Matters) համապատասխան՝ տեղեկությունների ավտոմատ փոխանակման գործընթացի դյուրացմանն ուղղված՝ ստանդարտացված և արդյունավետ մեխանիզմի ապահովման նպատակով:

Համաձայնագիրը հաջորդում է Եվրոպայի խորհրդի «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիային ու այն փոփոխող արձանագրությանը, որոնք, ըստ էության, քննարկվող համաձայնագրի իրավական հիմքերից են, և որոնք Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել են 2019 թվականի դեկտեմբերի 13-ին ՀՕ-275-Ն օրենքով (ՍԴՈ-1490):

**2.** Համաձայնագիրն ունի հետևյալ վեց հավելվածները.

Հավելված Ա՝ «Ոչ փոխադարձության սկզբունքով գործող պետությունների ցանկը» (ենթակա է լրացման), Հավելված Բ՝ «Փոխանցման մեթոդները» (ենթակա է լրացման), Հավելված Գ՝ «Տվյալների պաշտպանության նշված երաշխիքները» (ենթակա է լրացման), Հավելված Դ՝ «Գաղտնիության պահպանման վերաբերյալ հարցաշար» (ենթակա է լրացման), Հավելված Ե՝ «Իրավասու մարմինները, որոնց համար սույն Համաձայնագիրը գործողության մեջ է դրվել» (ենթակա է լրացման), Հավելված Զ՝ «Փոխանակման նախատեսված ամսաթվերը»:

**3.** Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

**3.1.** ապահովել, որ Կոնվենցիայի 6-րդ և 22-րդ հոդվածների դրույթների և Միասնական հաշվետվողական ստանդարտով (հարկային հարցերով ՏՀՀԿ-ի կողմից Մեծ քսանյակի երկրների հետ համատեղ մշակված՝ ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման ստանդարտ (որը ներառում է Մեկնաբանությունները)) նախատեսված հաշվետվության տրամադրման և պատշաճ ստուգումների կիրառվող կանոններին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինն («Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիայի Հավելված Բ-ում նշված անձինք և մարմինները) այլ Իրավասու մարմնի հետ, որի համար Համաձայնագիրը համարվում է գործողության մեջ մտած, յուրաքանչյուր տարի ավտոմատացված ձևով փոխանակի այդ կանոնների համաձայն և Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերության մեջ նշված կարգով ձեռք բերված տեղեկությունները (հոդված 2, ենթապարբերություն 1.1),

**3.2.** ապահովել, որ Համաձայնագրի 2-րդ հոդվածում նշված տեղեկությունների փոխանակման նպատակով՝ փոխանակված տեղեկություններում նշվի արժույթը, որով յուրաքանչյուր համապատասխան գումար արտահայտված է (հոդված 3, պարբերություն 2),

**3.3.** հաշվի առնելով Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը և համաձայն 7-րդ հոդվածով սահմանված ծանուցման ընթացակարգերի, ներառյալ՝

դրանում նշված ամսաթվերը՝ ապահովել, որ տեղեկությունները փոխանակվեն Հավելված Զ-ում նշված տարվանից սկսած այն օրացույցային տարվա ավարտից հետո ինն ամսվա ընթացքում, որին վերաբերում են տեղեկությունները (հոդված 3, պարբերություն 3),

**3.4.** ապահովել, որ Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինն այլ Իրավասու մարմնի հետ ավտոմատ կերպով փոխանակի Համաձայնագրի 2-րդ հոդվածում ներկայացված տեղեկությունները միասնական հաշվետվողական ստանդարտի սխեմայով՝ Նշագրման ընդլայնվող լեզվով (XML) (հոդված 3, պարբերություն 5),

**3.5.** ապահովել, որ Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինն այլ Իրավասու մարմնի հետ մշակի և համաձայնեցնի տվյալների փոխանցման մեկ կամ մի քանի մեթոդներ, այդ թվում՝ գաղտնագրման չափանիշները՝ ստանդարտացումն առավելագույնի հասցնելու և բարդությունները և ծախսերը նվազագույնի հասցնելու համար՝ նշելով դրանք Հավելված Բ-ում (հոդված 3, պարբերություն 6),

**3.6.** ապահովել, որ Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինը մյուս Իրավասու մարմինն ծանուցի, երբ հիմքեր ունի կարծելու, որ սխալը կարող է դարձած լինել տեղեկությունների ոչ ճիշտ կամ թերի տրամադրման պատճառ, կամ Հաշվետվություն տրամադրող ֆինանսական հաստատության (Պետության ցանկացած ֆինանսական հաստատություն, որը չի համարվում Հաշվետվություն չտրամադրող ֆինանսական հաստատություն) կողմից չի ապահովվել Միասնական հաշվետվողական ստանդարտով նախատեսված՝ հաշվետվության տրամադրման գործող պահանջներին և համալիր ստուգման ընթացակարգերին համապատասխանությունը, իսկ այդպիսի ծանուցում ստացած Իրավասու մարմինն հանդես գալու դեպքում՝ ձեռնարկի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ ծանուցման մեջ մատնանշված սխալները և անհամապատասխանությունները վերացնելու համար (հոդված 4),

**3.7.** փոխանակվող բոլոր տեղեկությունների նկատմամբ կիրառել Կոնվենցիայով նախատեսված գաղտնիության պահպանման կանոնները և այլ երաշխիքներ, այդ թվում՝ փոխանակվող տեղեկությունների օգտագործումը սահմանափակող

դրույթներն այն չափով, որը պահանջվում է անձնական տվյալների պաշտպանության անհրաժեշտ մակարդակ ապահովելու համար՝ այն երաշխիքների համաձայն, որոնք կարող են տեղեկություններ տրամադրող Իրավասու մարմնի կողմից նշվել որպես Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող, և որոնք թվարկված են Հավելված Գ-ում (հոդված 5, պարբերություն 1),

**3.8.** ապահովել, որ Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինը Համակարգող մարմնի քարտուղարությանն (ՏՀՁԿ-ի քարտուղարություն, որը, համաձայն Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 3-րդ կետի, աջակցություն է տրամադրում Կոնվենցիայի կողմ հանդիսացող իրավասու մարմինների ներկայացուցիչներից կազմված համակարգող մարմնին) անհապաղ տեղեկացնի գաղտնիության պարտավորության ցանկացած խախտման կամ երաշխիքների չկատարման և արդյունքում կիրառված ցանկացած պատժամիջոցի և հետևանքների վերացման նպատակով ձեռնարկված գործողությունների վերաբերյալ (հոդված 5, պարբերություն 2),

**3.9.** ապահովել, որ Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինը Համաձայնագրի ստորագրման պահին կամ Հայաստանի Հանրապետության կողմից Միասնական հաշվետվողական ստանդարտի կիրարկման համար անհրաժեշտ օրենսդրական մեխանիզմների ներդրումից հետո հնարավորինս շուտ Համակարգող մարմնի քարտուղարությանն ուղարկի Համաձայնագրի 7-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պահանջներին համապատասխան ծանուցում (հոդված 7, պարբերություն 1),

**3.10.** Համաձայնագիրը ստորագրող մյուս բոլոր կողմերի հետ՝ տարեկան կտրվածքով հավասարապես կրել Համակարգող մարմնի քարտուղարության կողմից Համաձայնագրի կիրարկումը վարելու հետ կապված ծախսերը (հոդված 8, պարբերություն 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2014 թվականի հոկտեմբերի 14-ին ստորագրված «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**



**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

28 հուլիսի 2023 թվականի  
ՍԴՈ-1697